806

Էլմ. 31

1. Քաղցրութեամբ կկանչե Յիսուս քեզ տուն,
Ով մեղաւոր, եկուր այսօր,
Մերժելով իր սէրն, ոհ, մ’երթար հեռուն,
Մեղաւոր, եկուր այսօր:

Ով մեղաւոր,
Եկուր այսօր, ո՛վ մեղաւոր:
Յիսուս քաղցրութեամբ կկանչէ քեզ,
Եկուր այսօր:

2. Յիսուս կուտայ քեզ կատարեալ հանգիստ,
Յոգնած հոգի, եկուր այսօր,
Թէև բեռներդ ըլլան ծանր խիստ,
Կվերցնէ բեռդ այսօր:

3. Յիսուս կսպասէ երկար ժամանակ,
Ով մեղաւոր, եկուր այսօր,
Եկուր մեղքովդ, խոնարհէ խաչին տակ
Եւ ներում գտիր այսօր:

4. Յիսուս կաղերսէ, արդ լըսէ Իր ձայն,
Լսէ Իրեն, լսէ այսօր,
Իրեն գացողներն ցնծում կունենան,
Դուն ևս ցնծա առ այսօր:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025